

Հոն հասած իր ցաւերուն
 Անդունդներէն, դեռ կը սպասէ կը սպասէ
 Գեղին՝ որ է այլ եւրս իր միակ յոյսն:
 Եւ դարակի մը բարձրէն՝
 Անօթնհրու եւ շիջբու մէջերէն
 կը ծիծաղի անուն մ'ոսկի տառերով
 Եւ կարծես այսպէս կ'ըսէ.
 «Կու տամ հանգիստ, մոռացում,
 Զիս առ, զիս առ, ոչ թէ այն
 Խաբեպատիր խառնուրդը. ես, ես միայն
 Քիչ յիթերու մէջ կը փակեմ զօրութիւնն՝
 Որ ամէն խոնջ բիբերու քուն կը շնորհէ,
 Հանգիստ՝ ամէն սրբտեղու»:

ՎԵՐԱԵՆՈՒՆՆԵՐ

Ալ մէկ բանի չի յուսար նէ. արժօոյն է,
 Խօթ է ու խոնջ: Քանի՞ վայրկեան ունեցաւ
 Ուրախութեան. և ունեցաւ բնաւ. զուցէ
 Մտն է իր օրն ալ վախճանին: Բայց կ'անցնի
 Ապրիլի օդն յանկարծ. կ'ըսէ թէ «Ար զգաս»:

Յիշատակներ: Բայց ճըշմարիտ էր հանդէսն
 Իրիտասարդ հասակին, թէ՛ սըտախօս
 Դիւթանք, խօլանք մըն էր, ու բան չի մընար,
 Զի մընար բան մը զուարթագոյ ու սիրուն:
 Ժրպատուն կապոյտը կը հըծծէ թէ «Նայէ»:

Սըրբաբուսներ երգի, ազատ թըռչանքներ
 Մենք ալ, մենք ալ վայելեցիրք օր մ', էինք
 Տէր աշխարհի, զեղեցիկութիւնը միայն
 Մեզ համար էր, բայց որ ատենն էր արդեօք:
 Եւ ծիծեռնակ մը կը հըծծէ թէ «Գարնան»:
 Թարգմ. Հ. Ա. ՂԱԻԿԵԱՆ



ՎԵՐԱԵՆՈՒՆՆԵՐ

Ա.

Երգում է ահա արևը պայծառ,
 Համբոյր է տալիս ծաղիկած սարերին,
 Ուրտեղ աղջիկներ, կոյսեր սիրավառ
 Երգում են երգերն իրանց էարերին՝
 Համբոյր է տալիս կանաչ մարգերին՝
 Ուրտեղ հովիւներ սըրբիկի սոյլով
 Երգեր են ցանում մեղմիկ, սիրագին՝
 Զեփիւռի բոյրոտ ծոցումը վըրդով:

Ահա գառնուկներ անոյշ մայիւնով,
 Ահա բոժոժներ գանգիւնով հեշտին,
 Ահա ջրերը իրանց նանիով
 Լեցնում են ծաղիկոտ ծոցը սարերին:
 Յածիկ ծրխաններ էլ շունչ են հանում.
 Ահա մըշակներ զընում են դաշտեր,
 Երգելով երգեր այնպէս զըւարթուն,
 Գութանի երգեր, հողի օրորներ:
 Այն ո՞վ է այնտեղ՝ փոշոտ ճամպայում՝
 Զեռնում պինդ բըռնած ցուպը ճամբորդի.
 Այն ո՞վ է այնտեղ, շորս կողմն է դիտում...
 Մաշած շորերով աղտոտ, սընտոի...:

Բ.

Նա կանգ է առնում, չէ կարող քայլել.
 Նա կանգ է առնում նեղ փողոցներում.
 Անմերի առաջ լըսում է երգեր,
 Վառ յիշատակներ զարթնում են սըրտում:
 Տեսնում է մայրեր պառաւ՝ ծերունի,
 Իրանց տուների չեմերի առջին
 Նըստած՝ հանում են ձայնը ջահարակի,
 Զայնը անուշիկ, այնպէս հեշտագին:
 Ան, այն ձայները յիշատակներ են.
 Ուռույտ է սիրտը անբողոք պանդուխտին.
 Մի քանի կաթիլ այրուած աչերէն
 Մեղմ զըլուուելով դէպ՝ վար հոսեցին:
 Յիշատակներ են ամէնը, ամէն...
 Կեանքեր են, կեանքեր, օրեր թանկագին:
 Նա կանգ է առնում: Ահա գալիս են
 Զըբբեր աղջիկներ ժըպտուն, խնդագին:
 Մէկ, մէկ կուժ դըրած իրանց ուտերին՝
 Եարերի երգով խըրճիթ են դառնում.
 Աղբիւրների մօտ ջրերը լացեցին՝
 Տեսնելով նըրանց աչերը սիրուն:
 Երազոտ սարերում նոր բացուած տունկեր
 Է՛լ ամօթահար՝ դէպ՝ վար թեքուեցին.
 Ո՞վ ունի նըրանց նըման վառ այտեր,
 Ո՞վ ունի նըրանց պէս վարսեր նըբբին:
 Է՛լ չի դիմացաւ. կանգ առաւ այնտեղ.
 Մի քարի վըրայ նըստաւ արքամունակ.
 Ըսպասեց, մինչև հասան աղջիկներ.
 Զուր ուզեց նըանցից, ջուր, ջուր անուշակ:
 Քանի՞ տարիներ օտար երկըրում
 Այն անոյշ ջրին համը չէր տեսել.
 Քանի՞ տարիներ իր սըրտի ծալքում
 Կարօտը, կարօտն վառուել էր՝ այրուել:
 Կարօտը վա՛ռ վա՛ռ՝ իր հայրենիքին.
 Կարօտը իրա ծընողքին սիրուած.
 Կարօտը՝ հըզպարտ այն վե՛ն լեռներին.
 Կարօտը՝ ծաղիկոտ այն դաշտերին բաց:
 Խըմնեց անկըչում, մէկ կուժ ջուր խըմնեց...

Այն աղջիկները իրան յիշեցին.
 Բայց ախ, նա երբեք նըրանց չի յիշեց,
 Ընկճեսց քայլել ճամբի երկայնքին:
 Խորմեց նա, խըմեց, մէկ կուժ ջուր խըմեց
 Իր մի օր սիրած աղջըկայ ձեռքից.
 Այն վարդ աղջիկը իրան շուտ յիշեց...
 Դէպ ի տուն զընաց սիրտով վըշտաւից:
 Այն ո՛վ է այնտեղ՝ փողոցի խորքում
 Մի երգ է երգում, սևւ երգ պանդուխտի.
 Ուրթեր են այնտեղ՝ ցած խըրճիթներում
 Լքուում են երգը այն անբաղզ տըղի:
 «Քանի՞ տարիներ օտար երկըրում
 Կարօտը սըրտումս այրումայ ու վառումայ.
 Քանի՞ տարիներ, է՛յ իմ մայրիկ ջան,
 Քեզի պահել եմ իմ կուրծքին վըրայ:
 Ահա ես եկայ. սեմերի աւջին
 Տեսայ նանիներ երգ էին կանչում.
 Մայրիկ, բիբերըք քեզի չի անսին...
 Պէ՛ր ես, մայրիկ ջան, ո՛ր ես, ո՛ր տեղում...:
 Պանդուխտի կեանքը ո՛վ է ունեցել...
 Ոտար երկնի տակ, մութ փողոցներում
 Հերիք, մայրիկ ջան, հերիք եմ տանջուել.
 Է՛լ թո՛ղ ես հանգչիմ քո ջըբմիկ ծոցում...»:
 Ինչո՞ւ լալիս են ծերունի մայրեր,
 Ինչո՞ւ են ծեծում իրանց կուրծքերը.
 Ախ, ի՛նչ է, ի՛նչ է, ի՛նչ է պատահել...:
 Երգում է տըխտը, երգում պանդուխտը.
 «Հերիք, մայրիկ ջան, հերիք եմ տանջուել.
 Թո՛ղ գէթ մէկ անգամ ես քեզի տեսնեմ.
 Բաց քո թևերը, ես շատ եմ լացել.
 Գըրկի՛ր ինձ, մայրիկ, օրօր երգելին...»:
 Քայլում է, քայլում ցուած երգերով
 Ձեռքումը բըռնած ցուած պանդուխտի.
 Սիրտը շատ լեցուն յիշատակներով՝
 Յիշում է ուրախ կեանքը իր տըղի...:



Փողոցի միջին աղջիկներն ամէն
 Իրանց տունըը վագում են փութով,
 «Եղօն է եկել, Եղօն» կանչելէն.
 Նրծում են իրանց ծուկները վիշտով
 Գիտում են նըրանք, գիտում են, գիտում,
 Եղօի մայրը շատոնց է մեռել.
 Արդէն Եղօն ինք սև հողի ծոցում՝
 Երբ դեռ փոքրիկ էր իր հայրն էր յանձնել:
 Նբերով նանիներ «այն, այն» են անում,
 Միտքներն են բերում անբաղզ Եղօին.
 Նա դեռ ջահէլ էր՝ օտար երկըրում
 Հասնելու լուրը երբ իրանք առին:
 Ու երկարում է, զարնուում է ուժգին

Եղօի երգը ջարդուած կուրծքերի:
 Եղօ՛, խեղճ Եղօ, այնտեղ սև հողին
 Ան թևերում է նանիդ սիրելի:
 «Իկել է, նանի, Եղօն եկել է»,
 Ատում են աղջկունք իրանց մայրերին.
 Նեղ փողոցներում Եղօն երգում է
 Մի երգ պանդուխտի, մի երգ տըխտի...:



Հոտու նա, հասում խըրճիթի առջև.
 Ինչո՞ւ, բայց ինչո՞ւ, իր պառաւ նանին
 Չանհակին մօտիկ ինչո՞ւ չէր նըստել.
 Ինչո՞ւ տըղաքներ տըխտը նայեցին...:
 Բաղխեց ցած դուռը պարզուկ տըխակին,
 «Բաց, նանի, պառաց, եկել է ողբիլ.
 Բաց քո թևերը, թո՛ղ զըրկումդ հանգչիմ.
 Կարօտս եմ քաշում անոյշ համբըրիլդ»:
 Բայց ձայն չէր լքուում. տըղաքը ամէն
 Է՛լ փախել էին իրանց տըխակներ.
 Բախեց նա անվըրջ, ձայն չեկաւ ներսի.
 Ո՛ր էր իր նանին, մի՞թէ մեռած էր...:
 Նըստաւ յուսահատ այն քալիկ վըրան՝
 Մանուկ օրերի իր բարեկամն էր.
 Այնտեղ նա լացեց, լացեց անվախճան.
 Ո՛ր էր իր մայրը, ախ, ո՛ր էր, ո՛ր էր...:
 Ելաւ ու կոտորեց դուռը տըխակին.
 Մեռելու՞թիւն կար, շըշուէ չէր լքուում.
 Կոտրած էր դուռը փոքր թոնրատունին՝
 Ուրտեղ երգած էր մանուկ օրերում:
 Թճախը մարած, փայտի մի կըտոր
 Լքուած էր այնտեղ, և դորս վըրան
 Տեսաւ պատկերներ. սիրտին վիրաւոր
 Վէրքերն այն ատեն լայն լայն բացուեցան:
 Մօր, հօր պատկերն էր, առաւ համբուրեց.
 Լացում ու լացում անյոյս, ժամերով.
 Գըրլուկն տըրտօրէն խօսաբար շարժեց,
 Մարած օճախէն բաժնուեց միշտ լալով:
 Ախ, այն օճախը՝ որի առջև նա
 Ձըմրան օրերում հէքեաթ էր լքել.
 Յետոյ իր նանու ծուկներին վըրայ
 Թըռչունի նըման մե՛ղս քուն էր մըտել:
 Ա՛խ, այն օճախը իր կեանքն էր, կեանքն էր.
 Ինչո՞ւ քանդըւած, աւերուած զըտաւ.
 Այն պարզ օճախը իր իտէլայն էր...
 Ինչո՞ւ օճախէն մի օր հեռացան...:
 Միրտը ցուերից շուտ պահաւ պայթէր...
 Գրքան առջև տեսաւ ժպտիտով
 Վեղջին բարեկամն. սիրական շունն էր.
 Գըրկումը սեղմեց իր մանուկ կեանքին
 Անկեղծ ընկերը անգին, սիրական

Վերջին բարեկամն այս աշխարհին մէջ...
 Սեղանց գըրկումը պիտի, պիտի սնվախեման:
 Շունը առաջնորդ եղաւ Եղօին,
 Կա հետեւեցաւ նըրան գըրխիկոր...
 Այն ո՞վ է այնտեղ արցունք է թափում
 Մի շիրմի առջև՝ սիրտով վիրաւոր...
 *
 * *

Երգում է ահա՛ արևը պայծառ,
 Համբոյր է տալիս ծաղկոտ սարերին,
 Ուրտեղ մանկութեան օրերումը վառ
 Եղօի զուարթ երգերն լըսուեցին:
 Բայց ո՞վ է այնտեղ, մի ծառի տակին
 Մի շիրմի առջև արցունք է թափում.
 Ատէ՛ք, օ՛, ասէ՛ք, այն ո՞վ է այնտեղ
 Մի մանկան նըման տըխուր, հեկեկում...:
 Այն ո՞վ է այնտեղ սև երգ է կանչում.
 «Մայրիկ, ես եկայ, — օճաբըս մարած —,
 Բաց քո թեկերը, թո՞ղ հողի գըրկում
 Էս սիրտը լըսի քեզ պի՛նդ պի՛նդ սեղմած...»:
 ԱՐՄԷՆ ԵՐԿԱՅԷ

ԱՂՈՒԷՍՆ ՈՒ ԴԵՌԱՍԻ ՆԱՊԱՍԱԿՆԵՐԸ

Դէմքով բարի, համակրելի, իր նպատակին
 Հասնելու չափ քաջ համբերող,
 Աղուէս մը կար կեղծել գիտցող՝
 Եւել ցորչափ յատուկ ձերքն էր ողջ իւր ցեղին:
 Կազմ և պատրաստ էր ի կապուտ և կողոպուտ
 Դրացւոց իւրոց դարանամուտ:
 Կա մի գիշեր հաւնոց մ'ամբողջ կուլ տուած էր,
 Առաւօտուն ևս եկած էր՝
 Ուրախ զըւարթ դաշտի վերայ ընթօնելու,
 Դափնէ ծառին տակ հանգչելու,
 Զհրէ հերոս մի որ ի խազմէն արիննազայր
 Վայրիկ մ'ուզէր առնել դադար:
 Դաշուն էր այն ինչ դաւարագեղ, շոգեպարար.
 Որորտէլով աղուէսն ի նա ման կու գար:
 Արշալոյսին արցունքերը կը մաղուէին,
 Կը հշտանար սիրտն ու փորը կուչա աղուէսին.
 Թաւալզըրը մերթ նա կուզար մէջ եղեամին,
 Դըրոյթ կու տար, պարզէր, ծալէր մերթ գիւր
 (ազին.
 Ազիին հետ խաղ էր սարթում, հիւր մի մանուկ,
 Աղուէսն այն հին օձի բըրդուկ:
 Անդին երկու ձագ նապաստակ ևս խաղային,
 Ի գիւ ի վէզ մերթ կու գային դաշտին վերայ,
 Մերթ ալ նըստած յետին թեթև թաթից վերայ,

Միմանոց ողջոյն, նաև համբոյր շատ կու տային.
 Հապա յաւէտ սիրալորոր
 Ճաշ առնէին թիւմ և ծոթոր:
 Մէկ մ'ալ տեսան՝ տուտին ի ժած հովահրելով՝
 Աղուէսն անդին ժուռ գալով:
 Կայուըտեցան շուտ մ'իրարու և լուռ կեցան,
 Խորհուրդ ի մէջ առին հապա, դեղեկեցան,
 Մի փորձ արին, գնացին առաջ մի քայլ, երկու,
 Եւ փորձն ի խրատ եղաւ նոցա շուտ փախչելու:
 Գայնժամ աղուէսն հայեց աչօք յոյժ սիրարկու,
 Մինչև թովեց այն անմեղուկ ձագերն երկու,
 Որ անգիտակ նենգաւորաց չար արուեստին՝
 Մնացին կառչած ի նոյն տեղին:
 «Եւ տես ինձ արդ, անոնցմէ մին,
 Ի՞նչ գեղեցիկ աչքիւ ունի, կ'ըտէ միւսին,
 Ինչպէս անոյշ մեզ կու նայի, գորովալի՛,
 Մեզի համար սիրով հալի:
 Ի՞նչ վախ կայ. օ՛ն»: Եւ շուտ մը հոն,
 Վախն անոնցմէ կ'ըլլայ ցըրօն:
 Մի և երկու առաջ կ'երթնան քայլ առնելով,
 Տառամտելով, լըրտեսելով.
 Բանի կ'երթան, այն անօրէն կենդանին ալ
 Կ'աւելցընէ իւր կեղծաւոր դիմացը փայլ:
 Մինչ զի վըստահ և ապահով և կայտուելով՝
 Կը մօտենան աղուէսին քով:
 Եւ սա շոյում, ըստ կարելոյն ւ՛ մա՛ն կերպով
 Լեցնում է զայնս խընդութիւնով:
 Խեղճ ձագերը այսչափ խինդէն կը գինովանի,
 Բանզի զըտին մէժ բարեկամ,
 Եւ այժմ ի սպառ են երջանիկ.
 Այս է նոցին նստուտ կարծիք:
 Բայց կու գար մի ձեր նապաստակ՝ կ'անցնէր
 (անկէ,
 Եւ վագելով՝ Փախէ՛ք, կ'ըտէր, փախէ՛ք ատկէ.
 Կա ձեր ոտքին տակ փորում է ձեզ գերեզման:
 Խրատ յոյժ բարի, այլ անօգուտ և անազան:
 Երկու զըժբաղ ձագուկները կ'ուզեն փախչիլ,
 Բայց աղուէսը փութաց անոնց վըրին կըպչիլ.
 Եւ որպէս զի դաս մը տայ ձեզ որ չըլլայ սին,
 Փըջրեց անոնց ոտերոտին:
 Դուք դեռատի անփորձ տղերք,
 Ընկերութեան մէջ որ մըտնէք,
 Շըրջապատուած էք յարածամ
 Գառնազգեստ շատ գայլերէ,
 Կեղծելու վարժ աղուէսներէ,
 Երեսանց լաւ՝ չար մարդկանէ:
 Թո՞ղ ձեր մըտքէն չ'ելլէ յայնժամ,
 Թէ՛ ձեզ համար առէն բանէ
 Շատ աւելի վախնալ պէտք է
 Ասանկ օտար ձեզ անձերէ:
 Dorat. ՍՏԵՔԱՆ ԵՐԱՅԱՆ